ՍԱՂՄՈՍ 115

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Հեթանոսական կուռքերը հակադրված ՏԻՐՈՋ հետ <u>MT ներածություն չկա</u>	Կուռքերի դատարկությունը և Աստծո վստահելիությունը	Օրհներգ, որը հակադրում է ՏԻՐՈՋ զորությունը հեթանոս աստվածների անկարողության հետ	Միակ Ճշմարիտ Աստվածը	Միակ Ճշմարիտ Աստվածը
115:1-8	115:1-2	115:1-2	115:1	115:1-2
			115:2-8	
	115:3-8	115:3-8		115:3-4
				115:5-6
				115:7-8
115:9-15	115:9-11	115:9-11	115:9-11	115:9-11
	115:12-13	115:12-13	115:12-13	115:12-13
	115:14-15	115:14-15	115:14-15	115:14-15
115:16-18	115:16-18բ	115:16-18	115:16-18բ	115:16
				115:17-18բ
	115:18գ		115:18գ	115:18գ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը մարդկանց կողմից շինված կուռքերին վստահելու կատարյալ ունայնության մասին է: Միայն Միակ ճշմարիտ Արարիչ՝ Փրկիչ Աստվածն է արժանի վստահության:

Բ. Այս Սաղմոսը բնութագրվում է կրկնվող արտահայտություններով՝
1. «ոչ թե մեզ» կրկնվում է երկու անգամ, Սաղմ. 115:1

2. «նրանք ունեն. . .» յոթ ԱՆԿԱՏԱՐՆԵՐ, Սաղմ. 115:5-7
3. «վստահել», չորս անգամ (երեք ՀՐԱՄԱՅԱԿԱՆ և մեկ ԴԵՐԲԱՅ. հնագույն տարբերակները՝ ինչպես օրինակ LXX, Փեշիտտան, այս MT ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ մեկնաբանում են որպես ՎԱՂԱԿԱՏԱՐ), Սաղմ. 115:8-11
4. «Նա կօրհնի. . .», վեց անգամ (հինգ *Piel* ԱՆԿԱՏԱՐՆԵՐ և մեկ *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ), Սաղմ. 115:12-15,18:
5. «Փառաբանեցե՛ք Աստծուն»
   ա. ժխտական, Սաղմ. 115:17 (*Piel* ԱՆԿԱՏԱՐ)
   բ. հրամայական, Սաղմ. 115:18 (*Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ)

Գ. Սաղմոս 114 և 115 միացված են՝
   ա. Սեպտուագինտայում
   բ. Հալեպի Եբրայերեն MS 10-րդ դարի ձեռագրում
   գ. Լենինգրադի MS 10-րդ դարի ձեռագրում (MT-ի հիմքը)

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 115:1-8

[1]Ոչ թե մեզ, ո՛վ ՏԵՐ, ոչ թե մեզ, այլ Քո անվա՛նը փառք տուր՝
Հանուն Քո ողորմության ու ճշմարտության:
[2]Ինչո՞ւ հեթանոսներն ասեն.
«Ո՞ւր է հիմա նրանց Աստվածը»:
[3]Բայց մեր Աստվածը երկինքներում է.
Նա արեց ինչ որ ուզում էր:
[4]Նրանց կուռքերը արծաթից ու ոսկուց են,
Մարդկային ձեռքի գործեր են:
[5]Բերան ունեն, բայց չեն խոսում,
Աչքեր ունեն, բայց չեն տեսնում,
[6]Ականջներ ունեն, բայց չեն լսում,
Քիթ ունեն, բայց հոտ չեն առնում.
[7]Ձեռքեր ունեն, բայց չեն շոշափում,
Ոտքեր ունեն, բայց չեն քայլում,
Ոչ էլ խոսում են իրենց կոկորդով:
[8]Դրանց շինողները դրանց նման են,
Այդպես են նաև բոլոր նրանք,
Որ իրենց հույսը դրանց վրա են դրել:

115:1-8 Այս պարբերությունը կռապաշտության ունայնությանց մասին է: Կա միայն մեկ Աստված (տես՝ Երեմ. 10:6-10, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ): Կա միայն մեկ հույս «ազգերի» համար: Աստվածաշնչի բոլոր ուսանողները կանխաենթադրություններ ունեն Աստվածաշնչի «մետա-պատմության» վերաբերյալ (այսինքն՝ դրա հիմնական նպատակը կամ պատգամը): ՅԱՀՎԵԻ ազգերի համար Իրեն վստահելու ցանկությունը իմն է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):

115:1 Ի՞նչ հզոր համար է: Փառքը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓԱՌՔ (*doxa*)) պատկանում է ՅԱՀՎԵԻՆ միայն, ոչ մի այլ գործակալության կամ խմբի: Պատճառը՝
1. ՅԱՀՎԵԻ բարեգթությունն է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (*hesed*))

2. ՅԱՀՎԵԻ հավատարմությունն է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀԵԼԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ, նաև տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ (ՀԿ))
3. ՅԱՀՎԵՆ ինքնիշխան է, Սաղմ. 115:3 (տես՝ Սաղմ. 103:19, 135:5-6)
4. ՅԱՀՎԵՆ լսում է և գործում, իսկ կուռքերը չեն կարող, Սաղմ. 115:4-7 (տես՝ Սաղմ. 135:15-18, 2 Օր. 4:28, Ես. 44:12-17, Երեմ. 10:3-5)
5. ՅԱՀՎԵՆ «երկնքի և երկրի» արարիչն է (տես՝ Սաղմ. 115:15բ, 16, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ):

❖ **«Քո անունը»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»

115:2 Երկրորդ տողի հարցը աստվածաբանական խնդիր է: Իսրայելը պետք է քահանաների թագավորություն լիներ (տես՝ Ելից 19:5-6) օգնելու աշխարհին ճանաչել և հասկանալ ՅԱՀՎԵԻՆ: Սակայն իր անհավատության պատճառով աշխարհը տեսավ միայն Աստծո դատաստանը (տես՝ Եզեկ. 36:22-36):

Երկրորդ տողի նույն հարցը կրկնվում է Սաղմ. 42:3, 79:10 –ում (տես՝ Հովել 2:17, Միքիա 7:10):

115:3 Սա կենտրոնանում է ՅԱՀՎԵԻ ինքնիշխանության վրա (տես՝ Սաղմ. 135:6, Դան. 4:35):

115:4 «արծաթ ու ոսկի» Սրանք այն թանկարժեք մետաղներն են, որոնցով երեսպատում էին փայտից կամ քարից պատրաստված պատկերները (տես՝ 2 Օրինաց 4:28, 28:36, 29:17):

❖ **«մարդկային ձեռքերի գործ»** Ահա և խնդիրը (տես՝ 4 Թագ. 19:18, Եսայի 44:9-20, Գործք 17:29):

115:5-7 Կուռքերը մարդկանց արտադրություններ են: Դրանք անձնավորվում են ազգերի կողմից, ովքեր ստեղծում են իրենց, սակայն դրանք չեն կարող տեսնել, շարժվել, լսել, խոսել կամ գործել: ՅԱՀՎԵՆ է այն Աստվածը, ով գործում է:

115:7բ Քանի որ Սաղմոս 115:5-ը նշում է «խոսք», սա հնարավոր է նկատի ունի հմայության ինչ-որ տեսակի, որը կատարվում է հեթանոսական կուռքի անունով: Տես 2 Օրինաց 18:10-11-ի առցանց գրառումը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՄԱՅՈՒԹՅՈՒՆ

115:8 Այս համարը ընդունում է այն ճշմարտությունը, որ մարդիկ դառնում են հենց այն աստծո պես, ում երկրպագում են: Ո՛հ, երանի հավատացյալները շատ ավելի նմանվեն Հիսուսին: Սուրբգրային հավատքի նպատակը միայն ինչ-որ օր երկինքը չէ, այլ ներկայում Քրիստոսի նման լինելը (տես՝ Հռոմ. 8:28-29, 2 Կորնթ. 3:18, 7:1, Գաղ. 4:19, Եփես. 1:4, 4:13, 1 Թեսաղ. 3:13, 4:3,7, 5:23, 1 Պետ. 1:15): Արդյո՞ք քո կյանքը արտացոլում է նրան, ում երկրպագում ես:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 115:9-15
[9]Ո՛վ Իսրայել, ՏԻՐՈ՛ՋԸ վստահիր,
Նա է նրանց օգնությունն ու վահանը:
[10]Ո՛վ Ահարոնի տուն, ՏԻՐՈ՛ՋԸ վստահեք:
Նա է նրանց օգնությունն ու վահանը:
[11]Ո՛վ ՏԻՐՈՋԻՑ վախեցողներ, ՏԻՐՈ՛ՋԸ հուսացեք:
Նա է նրանց օգնությունն ու վահանը:
[12]ՏԵՐԸ մեզ հիշում է, Նա կօրհնի մեզ,
Նա կօրհնի Իսրայելի տունը,
Նա կօրհնի Ահարոնի տունը:

[13]Նա կօրհնի ՏԻՐՈՋ երկյուղն ունեցողներին,
Ե՛վ փոքրերին, և՛ մեծերին:
[14]ՏԵՐՆ օրհնություն կկուտակի ձեզ վրա,
Ձեզ ու ձեր որդիների վրա:
[15]Օրհնյալ եք դուք ՏԻՐՈՋԻՑ,
Ով երկինքն ու երկիրը ստեղծեց:

115:9-15 Ուշադրություն դարձրեք երեքպատիկ անվանակոչը և հրամանը («վստահիր», BDB 105, KB 120, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ):

1. Ո՛վ Իսրայել, վստահի՛ր ՅԱՀՎԵԻՆ, Սաղմ. 115:9,12 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼ (անունը))
2. Ո՛վ Ահարոնի տուն, վստահի՛ր ՅԱՀՎԵԻՆ, Սաղմ. 115:10, 12 (այսինքն՝ Ղևտական քահանաները, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՂԵՎՏԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՆԵՐԸ)
3. Դուք, որ վախենում եք ՅԱՀՎԵԻՑ, վստահե՛ք Նրան, Սաղմ. 115:11,12 (սա կարող է լինել #1 և 2-ի հետագա առանձնահատկությունը, տես՝ Սաղմ. 135:19-20, կամ անդրադարձ ոչ իսրայելացիներին, տես՝ 3 Թագ. 8:41-43, Եզրաս 6:21, Նեեմ. 10:28, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):

ՅԱՀՎԵՆ դրան ի պատասխան կլինի՝

1. նրանց օգնություն (տես՝ Սաղմ. 18:2, 33:20, 70:5, 121:2, 124:8, 146:5)
2. նրանց վահանը (տես՝ Սաղմ. 28:7, 59:11, 84:9,11, 119:114, 144:2)
3. մեզ կհիշի (տես՝ Սաղմ. 98:3)
4. կօրհնի թե՛ փոքրերին և թե՛ մեծերին
5. ձեզ և ձեր երեխաներին կավելացնի (BDB 414, KB 418, բառացի՝ «շատացնել», *Hiphil* ՀԱՅՑԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 112:2):

Կռապաշտության համար ժամանակի (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 28) և հավիտենության մեջ կան հետևանքներ: Հետևանքներ կան ՅԱՀՎԵԻ հանդեպ անձնական հավատքի և հավատարմության համար (տես՝ Սաղմ. 115:16-18):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՌԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 115:16-18
[16]Երկինքը, նույնիսկ երկինքները ՏԻՐՈՋՆ են,
Բայց երկիրը մարդկանց որդիներին տվեց:
[17]Մեռելները ՏԻՐՈՋԸ չեն օրհնի,
Ոչ էլ նրանք, որ դեպի լռություն են իջնում:
[18]Բայց մենք օրհնելու ենք ՏԻՐՈՋԸ այսուհետև՝ մինչև հավիտյան:
Փառաբանեցե՛ք Աստծուն:

115:16Ա «Երկինքը, նույնիսկ երկինքները ՏԻՐՈՋՆ են» Սա վերաբերում է ՅԱՀՎԵԻ գահին (այսինքն՝ NEB, «ամենաբարձր երկինքը», հ. 3-ում):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔՆԵՐԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿԻՆՔԸ

❖ **«բայց երկիրը»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ

115:16բ ՅԱՀՎԵՆ երկիրը տվել է մարդկության բնակության և վերահսկողության համար (տես՝ Սաղմ. 8:6): Սակայն այն Իրեն է պատկանում (տես՝ 2 Օրինաց 10:14), քանի որ Ինքն է ստեղծել (տես՝ Սաղմ. 121:2, 124:8, 134:3):

115:17 «մեռելները» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՐՏԵՂ ԵՆ ՄԵՌԵԼՆԵՐԸ

115:18 Աստծո ժողովուրդը հավիտյան օրհնելու (*Piel* ԱՆԿԱՏԱՐ) և փառաբանելու է (*Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) ՅԱՀՎԵԻՆ: Սա ենթադրում է հանդերձյալ կյանքը կռապաշտներից զատված, ովքեր «չեն փառաբանում» և «գնում են լռության մեջ» (տես՝ Սաղմ. 6:5, 30:9, 88:10-11, 94:17):

❖ **«հավիտյան»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ (*'olam*)

❖ **«Փառաբանեցե՛ք ՏԻՐՈՋԸ»** Ինչպես Սաղմ. 113:9գ-ում, LXX այս խոսքը տեղափոխում է հաջորդ Սաղմոսի սկիզբը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Բացատրե՛ք ՀԿ-յան հետևյալ տերմինները՝
   ա. բարեգթություն
   բ. հավատարմություն, ճշմարտություն
2. Ինչո՞ւ են Սաղմոս 115:1 և 2 աստվածաբանորեն այդքան կարևոր:
3. Ինչո՞վ է տարբերվում ՅԱՀՎԵՆ հեթանոս կուռքերից:
4. Արդյո՞ք Սաղմ. 115:9-11 նկատի ունի մեկ խումբ, երկու խումբ, թե երեք խումբ:
5. Թվարկե՛ք թե ով է ՅԱՀՎԵՆ իր հավատարիմ հետևորդների համար, և թե ինչեր է անում նրանց համար:
6. Ձեր իսկ բառերով բացատրե՛ք Սաղմոս 115:16-ը:
7. Բացատրե՛ք Սաղմոս 115:17բ-ի «դեպի լռություն են իջնում» խոսքը: